



## **Հայկական Հարցը եղել ու մնում է միջազգային հարց, այսինքն՝ միջազգային յարաբերութիւններին եւ պետութիւններին վերաբերող հարց**

**Հարցազրոյց՝ պատմաբան-դիւանագէտ Արա Պապեանի հետ**

*Հայոց Մեծ Եղեռնի 92-րդ տարելիցի ոգեկոչման կենտրոնական ձեռնարկին, որը տեղի ունեցաւ ապրիլի 24-ի երեկոյեան՝ «Արարատ» մարզաւանում, որպէս օրւայ բանախօս՝ հրաւիրւած էր պատմաբան-դիւանագէտ, Կանադայում Հայաստանի Հանրապետութեան նախկին դեսպան Արա Պապեանը: Պրն. Պապեանը թւականիս ապրիլի 29-ին այցելեց «Ալիք»-ի խմբագրատուն, ուր հարցազրոյց ունեցանք նրա հետ: Ստորեւ ներկայացնում ենք հարցազրոյցը:*

- *Հ.- Պրն. Պապեան, դուք ապրիլի 24-ի ձեր ելոյթի խոշոր բաժինը յատկացրել էիք հայոց պահանջատիրութեան իրաւական դրոյթներին եւ դրանց շրջագծում՝ պատմա-իրաւական պայմանագրերի ու փաստաթղթերի անժամանցելիութեան խնդրին: Ըստ ձեզ՝ որո՞նք են անցեալ դարաշրջանի նմանօրինակ պայմանագրերի, զորօրինակ Սեւրի պայմանագրի այսօրեայ կիրառութեան երաշխիքները՝ միջազգային ներկայ իրաւակարգերում:*

*Պ.- Հայկական Հարցը եղել ու մնում է միջազգային հարց, այսինքն՝ միջազգային յարաբերութիւններին եւ պետութիւններին վերաբերող հարց: Հետեւաբար՝ այդ հարցը կարող է լուծել միջազգային իրաւունքի վրայ, այսինքն՝ այն իրաւունքի, որոնք կարգաւորում են երկրների յարաբերութիւնները: Ես իմ ելոյթում համառօտակի վերլուծել էի այն բոլոր հինգ պայմանագրերը, որոնք վերաբերում էին հայ-թրքական սահմանին եւ իմ եզրակացութիւնը միանշանակ է, որ այսօր վաւերական են երկու պայմանագրեր, դրանք են՝ Սեւրի եւ Լոզանի պայմանագրերը, որոնցով հայերը ունեն էական իրաւունքներ: Սեւրի պայմանագիրը թէւ չի վաւերացւել, բայց դա մեզ համար խիստ կարեւոր է, որովհետեւ 89-րդ յօդուածը հանդիսանում է որպէս հայցադիմում ԱՄՆ-ին, որպէսզի վերջինս նախագահը իր իրաւարար վճռով որոշի Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանը, այսինքն՝ այդ հայցադիմումի կարգավիճակը բոլորովին կապ չունի Սեւրի պայմանագրի վաւերացւած կամ ոչ-վաւերացւած լինելու հետ: Այդ պատճառով է, որ Վիլսոնը հիմք ընդունելով այդ պայմանագրի մէջ ներառւած հայցադիմումը, ինչպէս նաեւ մինչեւ այդ ապրիլի 26-ին երեք մեծ տէրութիւններ՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի եւ Իտալիայի դիմումը որոշելու այդ սահմանը 1920 թ.-ի նոյ. 22-ի իրաւարար վճռով որոշեց հայ-թրքական սահմանը, որը նշանակում է, որ այդ օրւանից ի վեր իրաւական տեսանկիւնից՝ դէ իւրէ հայ-թրքական սահմանը այդ վճռով նշուած սահմանն է, եւ դա նշանակում է, որ Հայաստանի իրաւունքները տարածուում են Վանի, Բիթլիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի նահանգների վրայ, աւելի քան 100 000 քառակուսի կիլոմետր ընդհանուր տարածքով:*

- *Հ.- Կարելի է մանրամասնել, թէ ինչ դեր է վերապահւած Հայաստանի պետութեան եւ ինչ դեր Սփիւռքին՝ համազգային պահանջատիրական*

*Ներկայ փուլում: Հայկական այս երկու հատվածները ո՞ր հարցերում պետք է համադրեն ջանքերը եւ որ խնդիրներում ինքնուրոյն հանդէս գան:*

Պ.- Այս հարցում առաջնային դերը պատկանում է Հայաստանի Հանրապետութեանը, որովհետեւ Հայաստանի Հանրապետութիւնն է հանդիսանում իրաւայաջորդը առաջին հանրապետութեան, իսկ Փարիզի վեհաժողովով եւ մնացած բոլոր փաստաթղթերով պետութիւնն է կարող հանդէս գալ ու իր շահերը պաշտպանել, այսինքն՝ հողերը եւ ֆինանսական փոխհատուցումը տրւած է Հայաստանի Հանրապետութեանը: Սփիւռքահայութիւնը մեծ դեր ունի հարցը ճանաչել տալու, մեր ժողովրդին նախապատրաստելու, օտարներին աւելի շատ ծանօթացնելու այն: Իսկ ինչ վերաբերում է պահանջատիրութեանը եւ հատուցմանը, բնականաբար որեւէ համայնքի չի կարող տրւի հողային հատուցում, քանզի այդ համայնքները տարբեր երկրներում ապրող տարբեր քաղաքացիներ են, բայց ֆինանսական փոխհատուցման տեսակէտից, որ նախատեսում է փոխհատուցում եւ Հայաստանի Հանրապետութեանը թէ որպէս պետութիւն եւ անձանց, դա հնարաւոր է, քանզի Սփիւռքի մեծ մասը, ի բաց առեալ իրանահայ համայնքի, որի մեծ մասը Ցեղասպանութեան զոհերի զաւակներ չեն եւ էլ աւելի վաղ ժամանակներից են Իրան բերւել ու հաստատուել, իսկ մնացած Սփիւռքի մեծ մասը հետեւանքն է Հայոց Ցեղասպանութեան, ուստի՝ Սփիւռքը հանդիսանում է ժառանգորդը եւ իրաւայաջորդը նաեւ այդ հսկայական նիւթական կորուստների, որ իր նախնիներն են ունեցել եւ որոնց վերաբերեալ Թուրքիան պարտաւոր է իրականացնել փոխհատուցում:

- *Հ.- Ըստ Ձեզ՝ ինչո՞ւ են ԱՄՆ-ի զանազան կարգի ներկայացուցիչներ անընդհատ շեշտը դնում հայ-թրքական յարաբերութիւնների խրախուսման ու երկու երկրների միջեւ սահմանի բացմանը:*

Պ.- Բնական է, որ ԱՄՆ-ն, որ աշխարհի միակ գերտէրութիւնն է, ուզի, որ տարածաշրջանում լարւածութիւնները թուլանան, իսկ հայ-թրքական սահմանը՝ դա լարւածութեան գօտի է:

Բայց պիտի հարց առաջանայ, որ նախ ո՞ր սահմանը: Դա պիտի իրաւական տեսակէտից յստակեցւի, թէ որն է սահմանը, արդեօք սովետա-թրքական սահմանի՞ մասին է խօսքը, այսինքն՝ այսօրւայ դէ ֆակտօ սահմանի՞ թէ հայ-թրքական սահմանի մասին, որը ամրագրւել է ԱՄՆ-ի ժամանակի նախագահ Վիլսոնի իրաւարար որոշումով, բայց ցաւօք սրտի՝ կեանքի չի կոչւել, սակայն փաստաթղթի կարելորութիւնը դրանից չի փոխուում եւ իրաւականօրէն սահմանը մնում է նախկինը:

Պարզապէս, քանի որ 1920 թւականի դեկտեմբերից Հայաստանի Հանրապետութիւնը դադարեց անկախ գոյութիւն ունենալ, բնականաբար այդ տարածքների փոխանցումը չիրականացաւ, որովհետեւ չկար այն երկիրը, որին պիտի տրւէր սահմանը, իսկ ԱՄՆ-ը սահմանի բացմանը նայում է այն տեսանկիւնից, որ իր ազդեցութիւնը ուժեղացնի Հարաւային Կովկասի վրայ եւ դրա միջոցով վերջնականապէս Ռուսաստանին դուրս մղի եւ Անդրկովկասի վրայով տարածի իր ազդեցութիւնը՝ Միջին Ասիայի վրայ: Ամէն մի երկիր ընթանում է իր շահերով, մենք էլ պիտի մեր շահը պաշտպանենք, նաեւ գտնենք ուրիշ երկրների շահի մէջ հնարաւորութիւններ, որպէսզի այդ շահերը համադրուեն եւ իրականացուեն, որովհետեւ պետութիւնները կարողանում են կենսագործել իրենց շահերը, եթէ կարողանում են աջակցութիւններ ստանալ այլ պետութիւնների կողմից: Սահմանի բացման ոլորտում թէ ինչ է շահելու Հայաստանը՝ պիտի ասել, որ տարբեր կարծիքներ կան: Ամենավերացական կարծիքն այն է, որ Հայաստանը մեծապէս կօգուտի դրանից:

Բայց, դա վերացական կարծիք է եւ որեւէ բանով հիմնաւորւած չէ: Բերենք շատ պարզ տւեալներ: Ոչ պաշտօնական տւեալներով՝ ասուում է, որ Հայաստանի ու Թուրքիայի միջեւ առեւտուրը 200 միլիոն դոլար է կազմում, բայց կարելորն այն է, որ այդ առեւտրի մեծ մասը Ստամբուլի կամ Թուրքիայի արեւմտեան շրջանների հետ է, որոնք ունեն մասամբ զարգացած տնտեսութիւն: Ես խօսել եմ հայաստանեան բեռնափոխադրող ընկերութիւնների հետ եւ իրենց տւեալներով՝ 85 տոկոսը գալիս է այդ շրջաններից եւ անկախ նրանից, որ սահմանը բաց կը լինի թէ փակ՝ իրենք շարունակելու են բեռները տանել Փոթի եւ նաւով տանել, որովհետեւ դա է ամենաէժան ճանապարհը, քանի որ ցամաքով աւելի թանկ կը լինի: Այսպիսով՝ խօսքը կարող է վերաբերել 15 տոկոս ապրանքի մասին, այսինքն՝ 200 միլիոնի 15 տոկոսը, որի ապրանքափոխանակումը կարող է էժանանալ 15-20 տոկոսով՝ ամենաշատը, եւ ապրանքափոխանակումը այդ 30 միլիոնի մէջ կազմում է այսպէս ասած 5 միլիոնը, ոչ աւել, այսինքն՝ 6 միլիոնի 10 տոկոսի մասին է խօսքը, այսինքն՝ 600 000 դոլարի մասին է խօսքը. դա՛ լաւագոյն դէպքում:

Այստեղ կայ մի շատ կարելոր հարց, որ սահմանի բացումը չպիտի նոյնացնել նորմալ առեւտրատնտեսական յարաբերութիւնների հետ, որովհետեւ սահմանը կարող է բաց լինել, բայց քանի դեռ կնքւած չեն պայմանագրեր, այդ սահմանով ապրանքներ չեն փոխանակուելու: Իսկ նման պայմանագրեր չեն կարող ստորագրուել շատ պարզ պատճառով, որովհետեւ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ չկայ դէ իւրէ ճանաչում եւ երկու երկրների միջեւ չկայ դիւանագիտական յարաբերութիւն, այսինքն՝ սահմանի բացումը շատ վերացական յայտարարութիւն է, քանի որ չկայ դրա տնտեսական հիմնաւորումը, չկայ դրա դիւանագիտական քաղաքական հէնքը, որի վրայ այդ ամբողջը պիտի կառուցուի: Կայ մի ուրիշ վտանգաւոր հանգամանք, ուր նկատի չի առնուում այն գործօնը, որ թրքական էժանագին եւ անորակ ապրանքները կարող են Հայաստանի մի որոշ տնտեսական ոլորտների համար կործանարար հանդիսանալ, յատկապէս՝ գիւղատնտեսութեան տեքստիլի, սնունդի արդարութեան որոշ ոլորտների, ուստի՝ այս բոլոր հաշարկները պիտի նկատի առնեն: Ուրեմն՝ կրկնում եմ, որ առաջին հերթին պիտի յստակեցուի, թէ որն է հայթրքական սահմանը, յետոյ պիտի խօսուի դրա բացման մասին, երկրորդ՝ պիտի հաստատուեն դիւանագիտական յարաբերութիւններ որ հնարաւոր լինի կնքել պայմանագրեր եւ երրորդ՝ եթէ հնարաւոր լինի ապրանք արտածել Թուրքիա կամ Եւրոպա, այդ դէպքում՝ մենք կը շահենք, բայց, դժբախտաբար, Հայաստանում այդքան ապրանքացանկ չեն տեսնում, որ կարելի լինի արտածել ու վաճառել:

Գալով սահմանը բացելուց Թուրքիայի շահի մասին, Թուրքիայի շահը շատ մեծ է, պարզապէս Թուրքիան ենթարկուում է ադրբեջանական լաբբիին ու Ադրբեջանի պետութեան ճնշումներին եւ չի ուզում Ադրբեջանին նեղացնել ու յարաբերութիւնները վատացնել: Եթէ Թուրքիան ուզում էր վերջնականապէս շրջափակման ենթարկել Հայաստանին, ինքը թոյլ չէր տայ, որ ներկայում Հայաստանում շրջանառող իր ապրանքները Հայաստան մտնէին, որոնք հիմնականում գալիս են Վրաստանի միջոցով, ինքը լաւ էլ գիտէ, որ այդ ապրանքները Վրաստանից անցնում են Հայաստան, հետեւաբար՝ Թուրքիան այսպէս է վարում՝ չնեղացնելով Ադրբեջանին եւ ընդառաջելով նրան, փակ է պահում սահմանը, բայց մասամբ իրականացնում է ապրանքի արտածում ու դրանց վաճառքը: Միշտ ապրանք ծախողն է շահողը. ամբողջ աշխարհի պայքարը այսօր շուկայի համար է, ոչ թէ՛ արտադրութեան, որովհետեւ արտադրելը հնարաւոր է, սակայն որոշ պարագաներում սահմանափակում է արտադրութիւնը՝ շուկայ չլինելու պատճառով, հետեւաբար՝ առեւտրի մէջ շահողը Թուրքիան է:

Պիտի ասել, որ երբ թրքական ապրանքը գալիս է Հայաստան, նոյն այդ ոլորտները, որոնք Հայաստանում են, չեն զարգանում. ուստի՝ պիտի ասել, որ Թուրքիան ունի տնտեսական շահ, բայց իր քաղաքական շահը հակասում է իր տնտեսական շահին. հետեւաբար՝ եթէ քաղաքական շահը աւելի վեր է նախընտրում ինչպէս ժամանակին Դեմիրելին էր ասել՝ «Մենք մեր քաղաքական շահը չենք վաճառելու երկու դրուշի համար». ուստի՝ նրանց շահն է Հայաստանին շրջափակելը: Պիտի ասել, որ միջազգային իրաւունքի տեսանկիւնից բլոկադան (շրջափակում) մի տեսակ պատերազմական գործողութիւն է: Պատերազմը միայն այն չէ, որ զէնքեր են կրակուում եւ զօրքեր յարձակուում. հետեւաբար՝ 1993 թւականի յուլիսից Թուրքիան Հայաստանի նկատմամբ իրականացնում է պատերազմական գործողութիւն:

(Շար. 1)

ԿԻՐԱԿԻ, 13 ՄԱՅԻՍԻ 2007  
76-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 89 (19989)

## **Հայկական Հարցը եղել ու մնում է միջազգային հարց, այսինքն՝ միջազգային յարաբերութիւններին եւ պետութիւններին վերաբերող հարց**

### **Հարցազրոյց՝ պատմաբան-դիւանագետ Արա Պապեանի հետ (Շարունակութիւն նախորդ համարից)**

- *Հ.- Ինչպիսի՞ն կը պատկերացնէիք Իրանի ատոմական թղթածրարի լաւագոյն հանգուցալուծումը: Ռազմական տարբերակի կիրառումը ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ տարածաշրջանի եւ ի մասնաւորի Հայաստանի անվտանգութեան վրայ:*

Պ.- Ռազմական կիրառումը խիստ բացասական հետեւանքներ կունենայ, բնականաբար ոչ միայն Իրանի, այլեւ՝ Հայաստանի համար եւ թերեւս Իրանից յետոյ երկրորդ պետութիւնը, որ շահագրգռւած է հարցի խաղաղ լուծման գծով, Հայաստանն է, զուտ այն պատճառով, որ այսօր մենք երկու ուղղութեամբ ունենք բաց սահման, որոնցով իրականացում է ապրանքաշրջանառութիւն. մէկը Վրաստանի ուղղութիւնն է՝ դէպի հիւսիս եւ հիւսիս արեւմուտք, իսկ միւրը՝ հարաւ եւ հարաւ արեւելք ուղղութիւնն է՝ Իրանի վրայով: Յատկապէս, Դուբայի վրայով եկող կամ գնւած ապրանքները նաեւ Իրանի ապրանքները, այդ սահմանով են գալիս: Բնականաբար, պատերազմական գործողութիւնը կը խաթարի այդ ապրանքափոխադրումները, եւ դա բացասաբար կանդրադառնայ մեզ վրայ: Երկրորդը՝ որպէս անհատ՝ պիտի ասեն, որ Հայաստանը մշտապէս շահագրգռւած է, որ Իրանում լինի կայուն, կենտրոնական ուժեղ իշխանութիւն եւ լաւագոյն ելքը այն պիտի լինի, որ կողմերը ձգտեն բանակցութիւնների միջոցով հարցը լուծել եւ ինչ-որ անլուծելի հարցեր կան այսօր, թերեւս պէտք է դրանց լուծումը սառեցւի մի քանի ամսով՝ նորից անդրադառնալու նպատակով, որովհետեւ երբեմն յոյզերը շիկանում են եւ ճիշտ որոշում կայացնելը հնարաւոր չի լինում եւ պիտի ժամանակ լինի, որ հանդարտւեն երկու կողմերը, որովհետեւ դա անկանխատեսելի հետեւանքներ կարող է ունենալ տարածաշրջանի համար: Եթէ պատերազմ սկսւի, յայտնի չէ, թէ ինչով կը վերջանայ ու երբ կը վերջանայ, եւ դա շատ բարդ ու վտանգաւոր հարց է ու ես ուզում եմ հաւատալ, որ այս ամբողջը խաղաղ լուծում է ունենալու:

- *Հ.- Դուք ՀՀ անկախութեան սկզբնական շրջանում դիւանագիտական առաքելութիւն էիք իրականացնում Իրանում: Այսօրւայ կտրւածքով*

*որո՞նք են, ըստ Ձեզ, հայ-իրանական միջպետական յարաբերությունների նւաճումները:*

Պ.- Այո, ես 1992-93 թւականներին աշխատել եմ Իրանի Իսլ. Հանրապետութիւնում, եղել եմ այն խմբի մէջ, որ նախապատրաստել եւ բացել է ՀՀ դեսպանատունը՝ այստեղ եւ հետագայում մօտ 3 տարի գլխաւորել եմ Հայաստանի արտգործնախարարութեան իրանական ուղղութիւնը եւ այդ ամբողջին բաւական ծանօթ եմ: Ասեմ, որ այն բոլոր ծրագրերը, որ մենք այն ժամանակ նախանշում էինք որպէս ցանկութիւն եւ միտք, այսօր աստիճանաբար իրականացւում են, յատկապէս բաւական առաջ է գնացել էներգետիկ ոլորտում համագործակցութիւնը, այսինքն՝ լինի դա էներգիայի փոխանցման տարբերակ, նաեւ հիդրոէլեկտրակայանի շինարարութեան հարցը:

Արդէն նախապատրաստւած է եւկան իրաւական դաշտ, կան պայմանագրեր, որոնց հիմնական ոլորտները կարգաւորւում են: Մենք այն ժամանակ ամենահասարակ խնդիրներն ունէինք, բայց այսօր կան կայացած լուրջ յարաբերութիւններ՝ առանց ցնցումների եւ շտապողականութեան, որը շատ կարելի է: Միզուցէ զարգացման տեմպի ընթացքի արագութեան առումով՝ կարելի էր ցանկանալ, որ մի քիչ աւելի արագ լինի, բայց կան թէ՛ առարկայական, եւ թէ՛ ենթակայական պատճառներ, բայց յարաբերութիւնների մէջ կարելորն այն է, որ չնայած երկու երկրներում էլ կան արտաքին լծակների ազդեցութիւն, նաեւ երկու երկրներն ունեն շահեր, սակայն Հայաստանն ու Իրանը իրենց երկկողմ յարաբերութիւնները չեն պայմանաւորում այլ երկրների հետ իրենց յարաբերութիւններով: Հայաստանի համար Իրանը մնում է յուսալի հարեւան եւ Իրանի հետ պիտի շարունակենք ու շարունակոււմ ենք համագործակցութիւնը: Կարծում եմ՝ Իրանը որպէս Իսլամական Հանրապետութիւն՝ բաւական հաւասարակշռւած քաղաքականութիւն է վարել ու վարում ուղղակի Ղարաբաղի հարցով եւ մենք հասկանում ենք, որ հեշտ չէ նման դիրքորոշում պահելը, բայց ի պատիւ Իրանի՝ նա կարողացաւ պետական բարձր շահերը վեր դասել շատ գայթակղութիւններից կամ պահի տակ որոշումներ կայացնելուց եւ ես վստահ եմ, որ այս յարաբերութիւնները այնքան կայուն են, որ որեւէ ազդեցութիւն չի կարող դրանք խաթարել. սա միայն կը զարգանայ:

• *Հ.- Եթէ վերջում որեւէ աւելացնելիք ունէք՝ խնդրեմ:*

Պ.- Ես ուզում եմ իրանահայութեանը եւ Իրանի ժողովրդին բարեմաղթել խաղաղութիւն, ցանկանում եմ այն բոլոր խնդիրները, որոնք այսօր ծառացած են Իրանի դիմաց, Իրանը յաջողութեամբ յաղթահարի, որովհետեւ կրկնում եմ՝ Իրանի կայունութիւնը եւ յաջողութիւնը նաեւ մերն է, քանի որ մեր երկրները հարեւան են, սահմանակից, նաեւ երկարատեւ պատմական համագործակցութեան անցեալ ունենք. հետեւաբար՝ մենք համագործակցութեան մեծ ապագայ ունենք:

Զրուցավար՝ ԿԱՐԻՆԷ ԴԱԻԹԵԱՆ  
(Շար. 2 եւ վերջ)